ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ Ս. ԷՅՐԱՄՋՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Էյրամջյան.

Ի պատասխան Ձեր 14.07.2020թ. հ.02/69702 գրության՝ հայտնում եմ.

Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության, ինչպես նաև հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից ներկայացված տեղեկատվությունների՝ Շենգավիթ վարչական շրջանի Շարուրի փող. հ. 5/5 շենքի հ.7 հասցեի շինությունը /ավտոտնակ/ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Արմեն Հովհաննիսյանին /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 040720-9-01-0239/: Նշված հասցեի շինության վրա կառուցված ծածկը և արտաքին պատի երեսպատումն ունեն համապատասխանաբար կառուցման և իրականացման վաղեմություն:

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ վարչական տույժ կարող է նշանակվել իրավախախտումը կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից վարչական վարույթ չի հարուցվել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ